ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

14 հունվարի 2013թ. թիվ 10

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77^2 հոդվածի պահանջի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. 2013թ. Լոռու մարզի համայնքներում վարչական հսկողության իրականացման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

Աշխատանքային ծրագրով նախատեսված համայնքներում իրականացվող հսկողության ընթացքում առաջնորդվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Ա.Գևորգյանի 2012թ. հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության և կադրային գործի վարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 02-Ն հրամանով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. հունվարի 14
ք.Վանաձոր